

ԿՈՒՍԱԿՐՈՆ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԾՈՒՄ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԵՆ ՆԵՐՍ

3 հունիսի 1990 թ., կիրակի. «Հոգեգալուստ»: Կրկնակի ուրախություն է այսօր իրաքահայության համար: Երեկոյան ժամը 5-ին սկիզբ կառնե սուրբ և անմահ պատարագը, որը կմատուցե թեմիս բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ եպս. Ասատուրյան: Մեկ օր առաջ քահանայական կոչում ստացած բարեշնորհ Սարգիս սրկ. Հովհաննեսյան եկեղեցվո ատյանեն ծընրադրյալ քայլերով կառաջնորդվի դեպի ս. խորան՝ խարտավիլակությամբ հոգեշնորհ հայր Մակար աբղ. Հովհաննեսյանի: Ձեռնադրության արարողության ընթացքին հոգեպարար «Կենդանարար Աստուած» շարականի երգեցողությամբ կբերվի սրբալույս մյուռոնը, որով Սրբազան Հայրը «Տեառնագրեսցէ» Սարգիս սարկավագի ճակատը՝ ըսելով. «Օրհնեսցի, օծցի եւ սրբեսցի ճակատ Տէր Վահան քահանայիս...»:

Հետ ձեռնադրության և օծման ձեռնադրող առաջնորդ Սրբազան Հայրը «Եւ լըցան ամենեքեան Հոգւով Սրբով» (Գործք Բ 4) բնաբանով կուտա իր հայրական խրատական իմաստալի քարոզը, ուր բացատրելե ետք Հոգեգալստյան մեծ տոնին իմաստն ու կարևորությունը Քրիստոսի հաստատած Եկեղեցվո հարատևության համար, կանդրադառնա նորօծ Հայր Սուրբի վերանվանումին.

«Հայոց պատմության ոսկեդեղնիկ էջերուն մեջ Վահան անունը նվիրականացած է արդեն: Վահան Գնունի իր արյունը հեղեց Վարդան Մամիկոնյանի կողքին՝ հայ ժողովուրդի խղճի ազատության ի խնդիր, ճըշմարտապես դասվելով մեր Մայրենի Եկեղեցվո սուրբերու շարքին: Մարզպանն հայոց Վահան Մամիկոնյան, երեց որդին Վարդանի եղբոր՝ Հմայակի, ապստամբության դրոշը ձեռքին երկար տարիներ մաքառեցավ ընդդեմ Պարսից, պահպանելով հողը հայոց որպես մեկ ու անբաժան երկիր: Իսկ անցնող տարվա վերջին ամիսներուն Մայր Աթոռի լուսավորչահիմն միաբանության երիտասարդ անդամներեն՝ Վահան աբեղա Դավիթյանը իր մատղաշ կյանքը նվիրաբերեց Արցախյան զոհասեղանին իբրև ողջակեզ, իրավամբ հանդիսանալով դարերու հո-

լովությամբ մեր նահատակյալ Եկեղեցվո նորագույն նահատակներեն մին:

Ի խորոց սրտի մեր մաղթանքն է, որ նորօծ Հայր Վահանը այս գիտակցությամբ ընթանա, և իր կյանքը անմնացորդ կերպով ընծայաբերե Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եղեկեցվո. տա Աստված»:

Ապա իրաքահայ հոգևոր դասը, գլխավորությամբ առաջնորդ Սրբազան Հոր, «Սուրբ ողջոյնի» հրաման կառնե նորապսակի օծյալ ճակատեն:

Հետ պատարագի իրաքահայ մեր հարազատ ժողովուրդը, խուռներամ բազմությամբ կուգան շնորհավորելու նորընծան Առաջնորդարանիս սրահին մեջ:

Սուրբ արարողության ներկա էին՝ Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչ, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյան, Իրաքի մեջ գտնվող Պապական դեսպանը, Բաբելոնի քաղդեացվոց Սրբազան Պատրիարք Տ. Ռաֆայել Ա Պրտաուիտ և այլ բարձրաստիճան քրիստոնյա հոգևորականներ:

Հաջորդ օր՝ 4 հունիսի, երեկոյան ժամը 6-ին, տեղի կունենա վեղարի տվչության կարգը Տ. Վահան քահանայինն, որով իսկ հուրախություն մեզ բոլորիս, նոր, երիտասարդ և կարող հոգևոր եղբայր և միաբան մը կավելնա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության շարքերուն մեջ հայր Վահան աբղ. Հովհաննեսյան անունով: Այս առթիվ Վեհափառ Հայրապետեն ստացանք հեռագիր:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Գերաշնորհ Տ. Ավագ եպս. Ասատուրյանին

Գոհունակ սրտով ստացանք Ձեր հեռագիրը: Սիրով կհաստատենք Ձեր կատարած ձեռնադրությունը Սարգիս սրկ. Հովհաննեսյանի, իբրև կուսակրոն քահանա, միաբան Մայր Աթոռիս, վերանվանելով ան Վահան աբեղա: Մեր օրհնությունը Վահան աբեղային և Ձեր Սրբազնության Մեր ջերմագին սիրո ու գնահատանքի ողջույնը:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
9 հունիսի 1990 թ.

Իրաքի հայոց թեմը իր հոգևորականաց և աշխարհականաց դասով, ի գլուխ ունենալով առաջնորդ Սրբազան Հայրը, որդիական անկեղծ շնորհակալություն կհայտնե Ամենայն Հայոց մեր սիրելի Հայրապետին, մեկ անգամ ևս խոստանալով, որ կմնան միշտ հլու և հնազանդ ծառաները մեր Սուրբ Եկեղեցվո ու ժողովուրդի, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Տ. ՎԱՀԱՆ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ

Տ. Վահան աբղ. Հովհաննեսյանը ծնվել է 13 նոյեմբեր 1963 թվականին Բաղդադում: Նախնական կրթությունը ստացել է Բաղդադի Հայ Կաթողիկե վարժարանում, ապա շարունակել միջնակարգ ուսումը Բաղդադի այլ դպրոցներում: 1981 թ. ընդունվել է

«Պաղտատ» էլեկտրո-ինժեներական ֆակուլտետը, որի հնգամյա դասընթացները ավարտել է 1985 թվականին: Նույն թվականին զորակոչվել է Իրաքյան բանակ: 1986—89 թթ. թեմիս բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ եպս. Ասատուրյանի կարգադրությամբ մեկնել է ԱՄՆ և ստացել բարձրագույն աստվածաբանական ուսում Նյու Յորքի Ս. Ներսես հայկական և Ս. Վլադիմիր ճեմարաններում՝ հաջողությամբ պաշտպանելով ավարտաճառ՝ «Շահապիվանի ժողովը—թարգմանություն, ներածություն և մեկնաբանություն» թեմայով: Նույն ժամանակամիջոցին հետևել է «քոնքորտիա» երաժշտական համալսարանի «դասական տեսությունների» դասընթացին:

1987 թ. հուլիսի 10-ին, Այլակերպության սուրբ տոնի առթիվ, ձեռամբ թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ եպս. Ասատուրյանի, ստացել է սարկավագական կոչում:

ՄԱԿԱՐ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ